ՏԵՂԵԿԱՆՔ

2023թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառքներով օտարված հողամասերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ մարզպետարանների ներկայացված տեղեկատվության՝ 2023թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճուրդ վաճառքներով օտարվել է **1517.2 հա** հողեր՝ **9,138,159,703.29 (9.1 մլրդ)** դրամով:

Օտարումները համեմատաբար ակտիվ են եղել ՀՀ Արմավիրի **/666.64 հա/,** ՀՀ Կոտայքի **/335.98 հա/,** ՀՀ Արագածոտնի **/139.71 հա/,** ՀՀ Գեղարքունիքի /**78.95 հա**/, ՀՀ Տավուշի **/73.16 հա/**, ՀՀ Արարատի **/67,52 հա/,** ՀՀ Լոռու **/56.57 հա/** և Վայոց ձորի **/52,27 հա/** մարզերում, առավել պասիվ՝ ՀՀ Շիրակի **/26,80 հա/ և** ՀՀ Սյունիքի /**19,29 հա/** մարզերում:

	ՀՀ մարզ	Աճուրդների քանակը	Տարածքը /հա/	Գումարը /դրամ/
1.	**Արագածոտն**	325	139.71	528,166,608
2.	**Արարատ**	267	67.52	514,184,125
3.	**Արմավիր**	291	666.64	797,884,043.8
4.	**Գեղարքունիք**	190	78.95	309,203,757.0
5.	**Լոռի**	198	56.86	163,431,486.7
6.	**Կոտայք**	740	335.98	5,801,374,737.0
7.	**Շիրակ**	122	26.80	264,389,239
8.	**Սյունիք**	63	19.29	53,522,066.14
9.	**Վայոց ձոր**	159	52.27	74,925,390.9
10.	**Տավուշ**	245	73.16	631,078,250
	Ընդամենը	**2600**	**1,517.2**	**9,138,159,703.29**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Ըստ իրականացված աճուրդների քանակի՝ ընդամենը ՀՀ - ում կազմում է **2600** միավոր (**1,517.2 հա**), որից գյուղատնտեսական նշանակության **775** միավոր (**1282.07** հա), բնակավայրերի **1,616** միավոր (**131,11 հա**), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության **158** միավոր (**61,01 հա**), հատուկ պահպանվող **38** միավոր (**13,05** հա) և **13** միավոր (**29.86 հա**) էներգետիկայի հողերի աճուրդ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը /դրամ/	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը /դրամ/	Տարբերությունը /դրամ/
1.	Արագածոտն	528,166,608	405,866,778	122,299,831
2.	Արարատ	514,184,125	351,399,003	162,785,122
3.	Արմավիր	797,884,043.8	483,349,346.4	314,534,697
4.	Գեղարքունիք	309,203,757.0	286,415,027.00	22,788,730
5.	Լոռի	163,431,486.7	136,349,073.3	27,082,413
6.	Կոտայք	5,801,374,737.0	2,921,021,744.0	2,880,352,993
7.	Շիրակ	264,389,239	177,433,679	86,955,560
8.	Սյունիք	53,522,066.14	43,508,183.12	10,013,883
9.	Վայոց ձոր	74,925,390.9	34,266,454.40	40,658,937
10.	Տավուշ	631,078,250	583,455,862	47,622,389
	Ընդամենը	**9,138,159,703.29**	**5,423,065,150**	**3,715,094,554**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ օտարված հողամասերի դիմաց գանձված գումարների հարաբերությունը դրանց կադաստրային արժեքի համեմատ ՀՀ մարզերում տարբեր են՝ այսպես օրինակ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ՀՀ Կոտայքի մարզում՝ **2,880,352,993 (2,8 մլրդ.)** դրամի օգուտ, ՀՀ Արմավիրի մարզում՝ **314,534,697 (314 մլն.)** դրամի օգուտ և ՀՀ Արարատի մարզում՝ **162,785,122 (162 մլն.)** դրամի օգուտ, իսկ ամենացածր ցուցանիշը ՀՀ Սյունիքի մարզում է **10,013,883 (10 մլն.)** դրամ: 2023թ. ոչ մի մարզում հողամասերի օտարման արդյունքում կորուստ չի արձանագրվել:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի մակերեսը (հա) 2022/2023		Տարբերությունը	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ) 2022/2023		Տարբերությունը /դրամ/
1.	Արագածոտն	459.74	139.71	-320,03	273,079,196	528,166,608	255,087,412
2.	Արարատ	33.88	67.52	33,64	70,187,895	514,184,125	443,996,230
3.	Արմավիր	462.80	666.64	203,84	416,863,893.8	797,884,043.8	381,020,150

4.	**Գեղարքունիք**	170.66	78.95	-91,71	177,849,058.0	309,203,757.0	131,354,699
5.	**Լոռի**	56.57	56.86	0,29	171,856,409.3	163,431,486.7	-8,424,923
6.	**Կոտայք**	282.52	335.98	53,46	2,341,649,563.0	5,801,374,737.0	3,459,725,174
7.	**Շիրակ**	19.57	26.80	7,23	188,648,534	264,389,239	75,740,705
8.	**Սյունիք**	35.02	19.29	-15,73	115,205,791.00	53,522,066.14	-61,683,725
9.	**Վայոց Ձոր**	131.13	52.27	-78.86	105,267,226.0	74,925,390.9	-30,341,835
10.	**Տավուշ**	77.18	73.16	-4,02	811,561,888	631,078,250	-180,483,638
	Ընդամենը	**1,729.1**	**1,517.2**	**-211,89**	**4,672,169,453.52**	**9,138,159,703.29**	**4,465,990,249.77**

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ 2022 թվականի համեմատ /**1729,1** հա/ 2023 թվականին /1,517.2 հա/ օտարվել է **211.89 հա** պակաս հողատարածքներ, և արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել **4,465,990,249.77 (4,4 մլրդ.)** ՀՀ դրամ ավել:

Ներկայումս հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տրվում են զանգվածային լրատվության միջոցներով և տեղադրվում են http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և էլեկտրոնային հարթակներում: Առաջարկում ենք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել նաև համայնքների, ինչպես նաև մարզպետարանների էլեկտրոնային կայքերում և հետամուտ լինել դրանց պատշաճ կատարմանը: